րեք չպէտք է մոռանանք այն չար ժամանակը, երբ ապրում էր նա։ Համեմատաբար խաղաղ էր միայն նորա վարդապետական գործունէութեան առաջին տասնամեակը. այնուհետեւ ՊՀ—ՊՁԶ (1421—1437) թուականները Սքանդարի, Շահռուհի, Ջհանշահի մրցութիւնների և պատերազմների տարիներն էին. երկիրն աւերւում էր, ժողովուրդը կոտորւում, գերւում կամ կողոպտւում։ Հանգամանքներից օգտւում էին նաև տեղական Քրդերը և աւերի ու յափշտակութեան ենթարկում ամէն ինչ։ Պակասը լրացնում է ՊՁ (=1431) թուականի մեծ սովը, ապա միջասահման գաւառներից ժողովրդի գաղթը դէպի Լոռի, Վրաստան։ Թշուառութիւնն ու աղքատութիւնը վերջին ծայրն էր հասել. Թովման յաճախ ողբում է այդ վիճակը իւր պատմութեան մէջ, որին ենթակայ էր և ինքը իւր աշակերտներով։ ՊՀԹ (=1430) թուին նա ստիպուած է լինում փախչել Լիմ։ Շահռուհի երկրորդ գալստեան ժամանակ ՊՁԵ (=1436) թուին փախչում է նախ Խլաթ, Արճէշ, Արծկէ....։ Քրդերը վրայ են հասնում, «և սուր ի ձեռին ունելով կամէին առհասարակ զամենեսեան սրոյ ճարակ առնել։ Իսկ մեզ ապաւինեալ յԱստուած, զամենայն մարմնաւոր գոյս ի բաց թողեալ, ի լերինս փախուստ առեալ, օգնութեամբն Աստուծոյ և շնորհաւք ազատեցաք ի ձեռաց նորա»։ Այս վերջին դէպքի մասին Թովման պատմում է նաև իւր ՊՁԴ (=1435) թուին գրած (սկսած) յիշատակարանի մէջ։ Թովման փախչում է «ի լերինս Բաղիշու»։ Ստեփանոս եպիսկոպոսը քահանաներով և ժողովրդով ընդառաջ է գնում փախստականներին և տանում է նրանց «ի լեառն Ուրտաբու»։ Թովմայի և նորա աշակերտների համար յատկացնում է իւր վանքը՝ «ք՞հիւք, հացով, անասնով և ա՞մ մարմնաւոր պիտոյիւք»**։ Թովմայի փախչելու թուականից (ՊՁԵ) Ստեփանոս գրչի յիշատակարանն ունինք մի Յայսմաւուրքի մէջ հէնց այն վանքում գրուած, ուր ապաստարան էր գտել Թովման. «Յայսմ ամի մեծ վարժապետն Թովմայ և Կարապետ (Թովմայի մտերիմը և Խառաբաստայ վանահայրը)* եօթն վարդապետօք *և այլ բազում աշակերտօք փախստեայ եկեալ ի գաւառէն Արճիշոյ՝ առ մեզ կային ժամանակ ինչ. և ի նոցին շնորհաբաշխ և առատաբուխ իմաստիցն բազումք օգտեցան պէս պէս ուսմամբ»***։ Ստեփանոս եպիսկո-*

---

* Թովմա Մեծ. պատմ. 83, 85, 87—89. 90—95. 108—109, 110—112։ Հայ. եւ Ս. Էջմ. մատ. Ձեռ. № 1429/1419, 81ա յիշատակարանը, ուր յայտնում է Թովման, թէ «Զ տարի է, որ տա՞պ չէ եղել ի ծովս բոլորս ամեն», այսինքն ՊՀ—ՊՀԶ թուականը. (31)։

** Նոր Նիւթեր. Ար. 765/4 (26/27)։

*** Նոյն րք. 108.